Հավելված
Թալին համայնքի ավագանու
29 հունվարի 2019թ. N-08-Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ

1. Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է ենթարկվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, միջոցներ է ձեռնարկվել համապատասխան խնդիրներին լուծումներ գտնելու: Քաղաքացիներին տրամադրվել են համապատասխան փաստաթղթեր և տեղեկանքներ:

2018թ. հունվարի 08-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում համայնքապետարանում փաստաթղթաշրջանառությունը կազմել է՝

Մտից գրություններ -722

Դիմումներ-133

Ելից գրություններ-566

Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունել է 322 իրավական ակտ, որից՝

Որոշումներ -279

Կարգադրություններ -43

Կայացել է համայնքի ավագանու 9 նիստ

Ավագանու կողմից ընդունվել է 71 որոշում:

Համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանել է խնամակալություն, հոգաբարձություն, իրականացվել է խնամակալության և հոգաբարձության մարմինների օրենքով վերապահված այլ լիազորություններ:

2018թ. ընթացքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից գումարվել է 6 նիստ: Նիստերի արդյունքում 7 անչափահասի նկատմամբ սահմանվել է տեսակցության կարգ և 1 անգործունակ ճանաչված քաղաքացու նկատմամբ՝ խնամակալություն:

2. Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառ

Համայնքի բնակիչների համար ստեղծված են բավարար պայմաններ՝ իրազեկ լինելու տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Թալինիհամայնքապետարանիպաշտոնականիկայքէ՝ **talin.am**

Թալինի համայնքապետարանի պաշտոնականի էլեկտրոնային հասցեն է՝

taliniqaxaqapetaran@mail.ru,

Էջսոցիալականցանցում՝ ֆեյսբուքյանէջ, <<**Թալինիհամայնքապետարան**>>

Թեժ գծի հեռախոսահամարը՝ **(+374) 024923138**

3. Ֆինանսական բնագավառ

2018թ. Բյուջեիմուտքերը → **157918.6**

հազարդրամ



Համայնքի 2018թ.բյուջեիեկամուտներնըստվարչական և ֆոնդայինմասերի

հազարդրամ

ՎարչականբյուջեիեկամուտներՖոնդայինբյուջեիեկամուտներ

Համայնքի 2018թ.բյուջեի կատարողականը

հազարդրամ

Հ/Հ	Ցուցանիշներ	Տարեկան պլան	Փաստացի կատարված պլան	%
1	Գույքահարկ	20500,0	20946,5	102,2
2	Հողի հարկ	6600,0	6906,2	104,6
3	Պետական տուրք	5000,0	5250,1	105,0
4	Տեղական տուրք	4270,0	4791,9	112,2
5	Այլ եկամուտներ	46399,6	34849,2	75,1
5.1	Որից գույքի և հողի վարձակալություն	4336,0	4589,4	105,8
5.2	ՔԿԱԳ՝ պետության կողմից	5357,1	5354,1	100,0
5.3	Այլ եկամուտներ	13115,5	3096,3	23,6
5.4	Վարչական իրավախախտում	150,0	0	0
5.5	Տեղական վճարներ	23441.0	23450,5	100,0
6	Դոտացիա	83533,5	83533,5	100,0
6.1	Որից դոտացիա	80032,9	80032,9	100,0
6.2	Սուբվենցիա՝ ժող. գործիքների	3500,6	3500,6	100,0
Ընդամենը եկամուտներ		**166303,1**	**157918,6**	**95,0**

Համայնքի 2018թ. բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման հոդվածների (ոլորտների)

հազար դրամ

Հ/Հ	Ցուցանիշներ	Գումար	տես. կշիռ
Ընդամենը		**166303.1**	**100,0%**
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	40863.1	24,6
2	Պաշտպանություն	100.0	0.1
3	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0	0,0
4	Տնտեսական հարաբերություններ	-17000.0	-10,2
5	Շրջակա միջավայրի պաշտպանություն	14800,0	8.9
6	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	11710,0	7.0
7	Առողջապահություն	0	
8	Հանգիստ, մշակույթ և կրոն	24480.0	14.8
9	Կրթություն	64950,0	39.0
10	Սոցիալական պաշտպանություն	1200,0	0,7
11	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	8200.0	4.9

4. Պաշտպանության կազմակերպման բնագավառ

Օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվում է տարածքային զինկոմիսարիատ:

5. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ

Իրականացվել են միջոցառումներ համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով: Կազմվել է աղետների ռիսկերի նվազեցման պլանը և ճշգրտվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը:

ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ անցկացվել է համատեղ վարժանքներ:

6. Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

*Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողին տրվել է 17 ճարտարապետահատակագծային առաջադրանք:

*Տրվել է 20 շինարարության թույլտվություն:

*Սահմանված կարգով ձևակերպվել է 4 ավարտված շինարարության շահագործման փաստագրում:

*Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:

*Իրականացվել է համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների, գույքի ամենամյա հաշվառում, գույքագրման փաստաթղթերը ներկայացվել է ավագանու հաստատմանը:

*Իրականացվել է 24 աճուրդ:

*Կատարվել է անշարժ գույքի 45 հասցեավորում:

*Կառուցապատման իրավունքով տրամադրվել է 1,24 հա հողատարածքներ:

2018թ. ընթացքում համայնքապետարանի և <<Վոլդ Վիժն>>, <<Միջազգային զարգացման ծրագրեր>>, <<ԷՅ ԹԻ ՓԻ>>, <<Դիակոնիա>> բարեգործական կազմակերպությունների,<<ԹՍՀ Թալին Սլոտեր ՀՕՈՒՍԵ>> ՍՊԸ, Բուրգ լե Վալանս քույր քաղաքի, Ռաֆֆի Արսլանյանի միջոցներով իրականացվել են 114934,3 հազար դրամ և ավելիքաղաքաշինական ծրագրեր, մասնավորապես՝

- **Հովանոցների պուրակիկառուցում,**

- **Սայաթ-Նովա և Տերյան 2-րդ նրբանցք փողոցների ասֆալտապատում,**



- **Փողոցների փոսալցում,**



- **Փողոցների գծանշում,**

- **60 ԿՎ արևային էլեկտրակայանի կառուցում(ծրագրի շրջանակներում մարզադպրոցում տեղադրվել է արևային ջրատաքացուցիչներ և Թ.Կրպեյան փողոցում անցկացվել է գիշերային լուսավորություն),**

- **Կանաչ գոտու ստեղծում և ցանկապատում 1,5 հա,**

- **Ընթերցասրահի վերանորոգում,**



- **Նստարանների տեղադրում հովանոցների պուրակում,**

- **Հեծանիվի կայանի կառուցում հովանոցների պուրակում,**

- **Ֆրանկոֆոնիայի կենտրոնի սանհանգույցի և միջանցքի վերանորոգում,**



- **15 բնակարանների գազաֆիկացում,**

- **Երաժշտական դպրոցի պատուհանների փոխարինում,**



- **1-ին հիմնական դպրոցի մարզադաշտի, դահլիճի վերանորոգում և մարզասարքերով համալրում**

- **Սպանդանոցի կառուցում:**

7. Հողօգտագործման բնագավառ

Վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

8. Առևտրի և ծառայությունների բնագավառ

*Տրամադրվելէոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման 39 թույլտվություն:

*Հանրային սննդի կազմակերպման և իրացման 10 թույլտվություն:

* Զվարճանքի օբյեկտների ժամը 24.00-ից հետո աշխատելու 1 թույլտվություն:

*Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առքուվաճառքի 3 թույլտվություն:

*Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի 6 թույլտվություն:

* Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի 3 թույլտվություն:

*Թալին համայնքի խորհրդանշանները (զինանշան, անվանում և այլն)որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու 1 թույլտվությյն:

* Արտաքին գովազդ տեղադրելու 2 թույլտվություն:

9.Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Իրականացվել են համայնքի ենթակայության ՀՈԱԿ-ների նյութատեխնիկական բազայի թարմացման աշխատանքներ:

Կրթամշակույթային ՀՈԱԿ-ների կողմից ծառայություններ ստացողների ընդհանուր քանակը կազմում է ՝500, որից

Երաժշտական դպրոց – 125

Մշակույթի կենտրոն – 120

Գեղարվեստի դպրոց – 99

Մանկապարտեզ – 126

Մարզադպրոց - 30

Կազմակերպվել ՝ մոտ 12 համաքաղաքային միջոցառում:

Աջակցություն է ցուցաբերվել կրթության, մշակույթի և սպորտի բնագավառում հաջողությունների հասած երտասարդներին, լավագույները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:

10. Առողջապահության բնագավառ

Թալին համայնքի և Լեհաստանի Նիսա քույր քաղաքի միջև կնքված հուշագրի շրջանակում Թալինի բժշկական կենտրոնին տրամադրվել է շտապօգնության ավտոմեքենա և բազմապրոֆիլ բժշկական սարքավորումներ և գործիքներ:

11. Սոցիալական պաշտպանության բնագավառ

Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին, արցախյան ազատամարտի մասնակիցներին, զոհվածների ընտանիքներին, ապրիլյան քառօրյաի մասնակիցներին՝ մասնավորապես 122 ընտանիք ստացել է դրամական օգնություն:

Սոցիալապես անապահով ընտանիքների 38 երեխայի <<Դիակոնիա>> բարեգործական հիմնադրամի աջակցությամբ տրվել է ամենամյա սնունդ օգնություն:

12. Գյուղատնտեսության բնագավառ

Գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ բնակչությանը ինքնարժեքից ցածր գնորով տրվել է սերմեր և պարարտանյութ:

Իրականացվել է ընտանի կենդանիների հաշվառում, որի արդյուքի հիման վրա կատարվել է կենդանիների պատվաստում: